Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-04-2021 թ. որոշմամբ
««ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՄԻՐՅԱՆ Փ. 18/3 12
1.3 Պետական գրանցման համարը		222.160.883728
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-12-30
1.5 ՀՎՀՀ-ն		02645043
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60505515
		+(374)93548328
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.teachforarmenia.org
1.8 Էլեկտրոնային փոստը		armine.shahinyan@aaaccounting.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Լարիսա Հովաննիսյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	29	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	1	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	1	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Սփյուռքի կրթօջախների ուսուցիչների վճար	1,500,000
	Քայլ դեպի տուն	9,440,560
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ուսուցչի վճար	490,000
	Դրամաշնորհային պայմանագիր	1,067,381,660
	Յունիսեֆ	17,879,500
	Դիջիթալ դիվայդ քոլ թու էքշրն	5,118,504
	Դրամաշնորհային պայմանագիր	76,015,522

Digitally signed by SHAHINYAN ARMINE 7610810134
Date: 2021.11.10 00:50:44 AMT

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն	4,441,360
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Մթերք	289,800
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ֆինանսական աջակցություն մասնակիցներին	204,541,228	
Նվիրատվություն Արցախի դպրոցներին	85,588,000	
Նվիրատվություն ՀՀ դպրոցներին	31,532,000	
Մասնակիցների համար կրթական և մասնագիտական վերապատրաստման ծախսեր	14,345,309	
ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ իրականացվող ծրագիր	3,692,000	
Գտնված երազ	717,870	
Ուսուցիչ-առաջնորդը հանուն որակյալ կրթության	1,120,000	
Ստեփանավանի համանքային զարգացման ծրագիր	100,000	
Տեխնոլոգիայի արհեստանոց	1,218,800	
Էկո պարկ	741,500	
Զբաղվածության կենտրոն	299,750	
Երազանքների ընթերցասրահ(ընթերցանության ակումբ)	842,900	
Հասնելով աստղերին	20,000	
Ջուր՝ ապրելու համար	57,490	
Tsaghashat FOOD Operation	75,600	
Թանգարան բաց երկնքի տակ	102,000	
Վերամշակեք կյանքի ցիկլի համար	192,000	
Ինֆոգրաֆիկներ	319,700	
Քար-կրտ-իկ	505,000	
Մաքուր մթնոլորտ	262,300	
Անվտանգությունն ու առողջությունը մեր ձեռքերում է	508,000	
Ջերմոց	340,666	
Հանքային ջրի աղբյուրները Նոր Խաչակապում	149,000	
Բացօդյա մինի ֆուտբոլի դաշտ	300,000	
Ջրի որակի վերլուծությունը և բարելավումը	626,000	

Ապաստարան-գրադարան	784,000
Բազարանի հնագիտական թանգարան	385,000
Մեծ Ամրակից խելացի կանգառ	355,000
Ֆրանսահայ դպրոցականների հետ ուսուցողական հաղորդակցման հարթակի ստեղծում	149,700
Աղբը մեր համայնքին հարիր չէ	26,300
ՏՆԷ-ՏՈՒՆ	97,990
Անկյուն	1,156,125
STEM laboratory construction(Japan Embassy Donation)	16,408,000
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,024,069,000
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	363,867,228

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___3___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20 www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին՝

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև դրանց առնչվող ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և մենք կատարել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության եւ կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «ԴելոյթԹուշԹոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2021 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք

առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Ապրիլի 27, 2021 թ.

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ
և անկախ աուդիտորական եզրակացություն
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Բովանդակություն

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 6

ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 7

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 8

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2020 թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Հիմնադրամը 9
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ 9
3. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը 19
4. Կարեվոր հաշվապահական դատողություններ և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները 22
5. Եկամուտ 22
6. Ծրագրային ծախսեր 23
7. Վարչական եվ այլ ծախսեր 24
8. Հիմնական միջոցներ 24
9. Ակտիվների օգտագործման իրավունք 25
10. Կանխավճարներ և այլ ակտիվներ 25
11. Դրամական միջոցներ եվ դրանց համարժեքներ 26
12. Հատուկ նպատակային միջոցներ 26
13. Առեվտրային և այլ կրեդիտորական պարտքեր 28
14. Ռիսկերի կառավարում 28
15. Ֆինանսական գործիքների իրական արժեքը 32
16. Կապիտալի կառավարում 32
17. Պայմանական պարտավորություններ 32
18. Գործարքներ կապակցված կողմերի հետ 35
19. Հետագա իրադարձություններ 36

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և զուտ ակտիվներում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների էության, Հիմնադրամի ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ միջոցառումների և դրույթների վերաբերյալ, և
- Հիմնադրամի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության և ապահովության մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Հիմնադրամի գործառնությունները արտացոլելու, ներկայացնելու և ցանկացած ժամանակ Հիմնադրամի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Հիմնադրամի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

Հիմնադրամի՝ 2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները ղեկավարության կողմից հաստատված են 2021 թ. ապրիլի 27-ին:

Ստորագրված է ղեկավարության անունից՝

Լարիսա Վիրջինիա Հովսեփյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Արմինե Շահինյան
Գլխավոր հաշվապահ

Ապրիլի 27, 2021 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20 www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին՝

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև դրանց առնչվող ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և մենք կատարել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության եւ կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է նեղաշիրթով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը: Ներկայացնող ցանցացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «ԴելոյթԹուշՏոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.am/about:
© 2021 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք

առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արմինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Ապրիլի 27, 2021 թ.

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020թ.	2019թ.
Եկամուտ			
Եկամուտ ֆոնդերի օգտագործումից	5	1,024,069	881,371
Այլ եկամուտ		206	6,858
Ծախսեր			
Ծրագրային ծախսեր	6	(845,459)	(573,280)
Վարչական ծախսեր	7	(191,055)	(281,437)
Այլ ծախսեր		-	(6,108)
Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող վարկային կորուստներ	11	(344)	2,046
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի փոխարժեքային տարբերությունից		42,704	(4,650)
Ֆինանսական ծախսեր		(5,355)	(2,105)
Շահույթը մինչև հարկումը		24,766	22,695
Շահութահարկ		-	(172)
Տարվա համապարփակ եկամուտ		24,766	22,523

Հաստատվել են հրապարակման համար 2021թ. ապրիլի 27-ին:

Լարիսա Վիրջինիա Հովաննիսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Արմինե Շահինյան
Գլխավոր հաշվապահ

Երևան, Հայաստանի Հանրապետություն

9-35 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	49,407	67,551
Ակտիվ օգտագործման իրավունքով	9	28,332	47,770
Կանխավճարներ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով		112,052	515
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**189,791**	**115,836**
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	547,102	444,387
Կանխավճարներ և այլ ակտիվներ	10	13,577	7,192
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**560,679**	**451,579**
Ընդամենը ակտիվներ		**750,470**	**567,415**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության պարտավորություն	9	13,376	29,771
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**13,376**	**29,771**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	67,475	52,085
Վարձակալության պարտավորություն	9	19,588	18,782
Հատուկ նպատակային միջոցներ	12	511,805	353,317
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**598,868**	**424,184**
Ընդամենը պարտավորություններ		**612,244**	**453,955**
Զուտ ակտիվներ			
Կուտակված հավելաճ		138,226	113,460
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**138,226**	**113,460**
		750,470	**567,415**

9-35 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Չուտ ակտիվներ
Չուտ ակտիվներ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**90,937**
Տարվա համապարփակ եկամուտ	22,523
Չուտ ակտիվներ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**113,460**
Տարվա համապարփակ եկամուտ	24,766
Չուտ ակտիվներ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**138,226**

9-35 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020 թ.	2019 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Նվիրատվություններից մուտքեր	12	1,182,557	989,747
Վճարումներ վարչական ծախսերի համար՝ հանած աշխատավարձը		(137,864)	(150,707)
Վճարումներ աշխատակիցներին		(368,460)	(274,987)
Վճարումներ պետական բյուջե		(117,372)	(109,967)
Վճարումներ ծրագրային ծախսերի համար՝ հանած աշխատավարձը		(477,254)	(241,277)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր		**81,607**	**212,809**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր		-	2,120
Հիմնական միջոցների ձեռքբերում		(3,265)	(40,330)
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(3,265)**	**(38,210)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վարձակալական վճարներ	9	(21,891)	(28,592)
Ֆինանսական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(21,891)**	**(28,592)**
Դրամական միջոցների եվ դրանց համարժեքների զուտ աճ		**56,451**	**146,007**
Զուտ վնաս արտարժույթի փոխարժեքային տարբերությունից		46,608	(2,414)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		**445,173**	**301,580**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	11	**548,232**	**445,173**

9-35 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

1. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») տեսլականն է Հայաստանի բոլոր երեխաներին, անկախ սոցիալ-տնտեսական հանգամանքներից, ընձեռնել հնարավորություն՝ բացահայտելու իրենց ողջ ներուժը գերազանց կրթության միջոցով:

Ուսուցչական առաջնորդության միջոցով Հիմնադրամն ապահովում է գերազանց կրթության հնարավորությունների հասանելիությունը յուրաքանչյուր երեխայի համար: Հիմնադրամը հետևողականորեն գերազանցում է իր գործունեության ներազդեցության ակնկալիքները: Իր տարածական և քանակական ընդգրկունությամբ այս շարժումն ունի հսկայական ներուժ՝ վերափոխել ոչ միայն Հայաստանի կրթական համակարգը, այլև երկրի զարգացումն առհասարակ:

Հիմնադրամը ներգրավում, վերապատրաստում և տեղաբաշխում է իր մասնակիցներին որպես ուսուցիչներ ՀՀ ամենահեռավոր դպրոցներում և անապահով համայնքներում առնվազն 2 տարի ժամկետով: Մասնակիցներն աշխատում են որպես ուսուցիչներ, փորձառու մասնագետներ, առաջնորդներ հանրապետության տարբեր դպրոցներում, ովքեր շարունակում են փոփոխություններ իրականացնել անգամ երկամյա ծրագիրը ավարտելուց հետո:

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը ստեղծվել է Լարիսա Վիրջինիա Հովաննիսյանի կողմից և գրանցվել է 2015 թ. դեկտեմբերի 30-ին: Հիմնադրամի իրավաբանական գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Ամիրյան 18/3, բն. 12: Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան 2/1: «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը հանդիսանում է ՀՀ Կրթության նախարարության գործընկեր: Հիմնադրամը հանդիսանում է նաև TEACH FOR ALL, Inc. համաշխարհային կրթական ցանցի գործընկեր կազմակերպություն:

Հիմնադրամի աշխատանքների կառավարումը և վերջնական վերահսկողությունն իրականացվում է 5 հոգուց բաղկացած Հոգաբարձուների խորհուրդի կողմից (2019 թ.՝ 6): Հիմնադրամը նվիրատվություններ է ստանում ՀՀ և օտարերկրյա գործընկերներից և անհատներից:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի աշխատակիցների թիվը կազմել է 33 (2019 թ. դեկտեմբերի 31-ին՝ 44) :

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն:

Պատրաստման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Հիմնադրամը գործում է անընդհատության հիմունքով, քանի որ ունի բավարար ռեսուրսներ իր գործունեությունը տեսանելի ապագայում շարունակելու համար:

Ամբողջ ֆինանսական տվյալները ներկայացված են հազար ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Հիմնադրամն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն: ՖՀՄՍ համաձայն, Հիմնադրամն իրականացրել է ճշգրտումներ և վերադասակարգումներ սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա: Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Հիմնադրամը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցները այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է վերը նշված սկզբունքներով, բացառությամբ բաժնետոմսերի հիման վրա վճարումների գործարքներից, որոնք նկարագրված են ՖՀՄՍ 2-ում, վարձակալության գործարքներից, որոնք նկարագրված են ՖՀՄՍ 16-ում և չափումներից, որոնք ունեն որոշակի նմանություններ իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, ինչպես օրինակ զուտ իրացվելի արժեքը համաձայն ՀՀՄՍ 2-ի կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի համաձայն:

Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից իրական արժեքով չափումները դասակարգվում են երեք մակարդակի՝ հիմք ընդունելով իրական արժեքով չափումների ընթացքում օգտագործված ելակետային տվյալների դիտարկելիության աստիճանը և իրական արժեքի ամբողջությամբ չափման ժամանակ օգտագործված տվյալների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված),
- Մակարդակ 2՝ մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն կամ անուղղակիորեն, և
- Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա:

Գործառնական արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն հիմնական տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Հիմնադրամն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): Հիմնադրամի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Հիմնադրամի հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Հաշվապահական հաշվառման ներկայացված քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չզեղչված հիմունքով և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական պարգևավճարների տեսքով, եթե Հիմնադրամն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք մատուցված աշխատակցի կողմից և պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է բանկային ավանդների և ընթացիկ հաշիվների գծով տոկոսային եկամուտը: Ֆինանսական եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքներում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արտարժույթով գործարքներ

Հիմնադրամի գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են Հիմնադրամի համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու

ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմքունքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյոք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Հիմնադրամի կիրառված փոխարժեքները տարվա վերջի դրությամբ հետևյալն են.

	Միջին տոկոսադրույք		Ստիպ տոկոսադրույք	
	2020թ.	2019թ.	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	489.31	480.24	522.59	479.7
ՀՀ դրամ /1 եվրո	559.30	537.46	641.11	537.26
ՀՀ դրամ /1 ռուբլի	6.77	7.43	7.02	7.77

Հարկում

Հիմնադրամն ազատված է շահութահարկից բացառությամբ գործառնություններից, որոնք դուրս են Հիմնադրամի ոչ առևտրային գործառնությունների շրջանակից:

Գործունեության հետ կապված հարկեր. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են այլ հարկատեսակներ ևս, որոնք գնահատվում են ելնելով Հիմանդրամի գործունեությունից: Այս հարկերը ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որոնք հանդիսանում են համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում են որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի ապաճանաչումից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում զուտ հիմունքով համապարփակ ֆինանսական արդյունքում՝ «այլ եկամուտ»/«այլ ծախսեր» հոդվածում:

Հետագա ծախսումներ. Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ հիմնադրամ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսերը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջանալուն պես:

Մաշվածություն. Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի վրա և նախատեսված է դուրս գրելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի օգտագործման հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը:

Գնահատված օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ բոլոր տեսակի գնահատումներում փոփոխությունների ազդեցությունը հաշվառելով առաջընթաց սկզբունքով: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար՝

Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ	1- 5 տարի
Տնտեսական գույք	5 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի

Պայմանական պարտավորություններ եվ ակտիվներ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին

հաշվետվությունում, սակայն դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը և որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները, բացի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների հայտնաբերման նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրումների գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները.

- թողարկողի կամ պայմանագրային կողմի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի հավանականությունը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են առևտրային դեբիտորական պարտքերը, ակտիվները ենթակա են խմբային արժեզրկման գնահատման, նույնիսկ երբ այդ ակտիվներն անհատապես արժեզրկված չեն:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի նախնական արդյունավետ տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհավաքագրվելի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ոչ ֆինանսական ակտիվներ. Հիմնադրամի ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Նվիրատվություններ

Միջոցները ստացվել են հատուկ նպատակների համար և նախատեսված չեն Հիմնադրամի կողմից այլ նպատակներով օգտագործման համար: Այս միջոցները նախապես հաշվառվել են որպես պարտավորություն և ճանաչվել են որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, Հիմնադրամի պարտավորությունների կատարմանը զուգընթաց ՝ սահմանված նպատակային միջոցների նվիրատվության պայմանագրերով: Որպես կանոն, այսպիսի նվիրտավություններից ստացված եկամուտը ճանաչվում է այդ պարտավորությունների կատարմանը զուգահեռ:

Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնականում ներառում են գործունեությունից կուտակված հավելաճ կամ պակասորդ : Հիմնադրամի զուտ ակտիվները հիմնադիրներին բաշխման ենթակա չեն ո՛չ բնականոն գործունեության ընթացքում, ո՛չ էլ լուծարման ժամանակ:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում այն դեպքում, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված այն ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են

ֆինանսական ակտիվի և պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների), համապատասխանաբար ավելացվում կամ նվազեցվում են ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքից, սկզբնական ճանաչման պահին: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր ձեռքբերումները և վաճառքը ճանաչվում և ապաճանաչվում է գործարքի կատարման ամսաթվի դրությամբ: Կանոնավոր ձեռքբերումը և վաճառքը ֆինանսական ակտիվների այն ձեռքբերումները և վաճառքներն են, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը կանոնակարգման կամ շուկայի կողմից սահմանված ժամկետներում: Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները այնուհետև գնահատվում են կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ կախված ֆինանսական ակտիվների դասակարգումից:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահպանել ֆինանսական ակտիվները պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով , և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի օրերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Հետևյալ պայմաններին համաատասխանող պարտքային գործիքները հետագայում չափվում են համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է և՛ հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և՛ վաճառել ֆինանսական ակտիվները, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի օրերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Չնայած վերոնշյալին՝ Հիմնադրամը ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ կարող է կատարել ընտրություն/դասակարգում՝ մշտական հիմունքներով.

- Հիմնադրամը կարող է մշտական հիմունքներով որոշել ներկայացնել այլ համապարփակ եկամուտում սեփական կապիտալի ներդրման իրական արժեքի հետագա փոփոխությունները՝ որոշակի չափանիշների պահպանման դեպքում, և
- Հիմնադրամը կարող է մշտական հիմունքներով դասակարգել պարտքային գործիքը, որը չափվում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական

արդյունքի միջոցով իրական արժեքով, ինչպես չափվել է շահույթի կամ մնասի միջոցով իրական արժեքով, եթե այն վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է հաշվապահական հաշվառման անհամապատասխանատվությունը:

Ամորտիզացված արժեքը և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների համար՝ բացառությամբ գնված կամ ի սկզբանե արժեզրկված բերված ակտիվների (օրինակ այն ակտիվները, որոնք վարկային գծով արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ) արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր)՝ բացառությամբ ակնկալվող վարկային կորուստները պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակաշրջանի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակաշրջանում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա համախառն հաշվեկշռային արժեքին: Գնված կամ ի սկզբանե վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար վարկային գծով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է՝ զեղչելով ապագա գնահատված դրամական հոսքերը՝ այդ թվում նաև ակնկալվող վարկային կորուստները, մինչև պարտքային գործիքի ամորտիզացված արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ:

Ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով գնահատվում է ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչման ժամանակ՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կուտակված ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ սկզբնական և ներկա արժեքի միջև ցանկացած տարբերության դեպքում՝ ճշգրտված ցանկացած կորստի գծով պահուստի չափով:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը պարտքային գործիքների համար, որոնք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով: Ֆինանսական ակտիվների համար՝ բացառությամբ գնված կամ ի սկզբանե արժեզրկված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվների, տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի համար՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների, որոնք այնուհետև վարկային գծով արժեզրկվում են: Հետագայում վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ՝ ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի մասով: Եթե հետագա հաշվետու ժամանակաշրջաններում վարկային գծով արժեզրկված ֆինանսական գործիքի վարկային ռիսկը բարելավվում է այնքան, որ ֆինանսական ակտիվն այլևս չի հանդիսանում վարկային գծով արժեզրկված, տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը՝ ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի գծով:

Գնված կամ ի սկզբանե վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար Հիմնադրամը ճանաչում է տոկոսային եկամուտ՝ կիրառելով վարկային գծով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ ֆինանսական ակտիվի՝ սկզբնական ճանաչման ժամանակ ամորտիզացված արժեքի գծով: Այս հաշվարկը չի վերադարձվում համախառն հիմունքով,

նույնիսկ եթե ֆինանսական ակտիվի վարկային ռիսկը հետագայում բարելավում է այնքան, որ ֆինանսական ակտիվը այլևս վարկային գծով չի արժեզրկվում:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում և ներառված է «ֆինանսական եկամուտ-տոկոսային եկամուտ» հոդվածում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Հիմնադրամը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստները պարտքային գործիքներում ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ինչպես նաև ճանաչում է վարձակալության գծով դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների, ինչպես նաև ֆինանսական երաշխավորված պայմանագրերի գծով

Ակնկալվող վարկային կորուստների գումարը թարմացվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին՝ վարկային ռիսկի փոփոխությունների արտացոլման համար համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչման պահից:

Հիմնադրամը մշտապես ճանաչում է ամբողջական ԱՎԿ (ակնկալվող վարկային կորուստներ)՝ առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և վարձակալական դեբիտորական պարտքերի գծով: Այս ֆինանսական ակտիվների ակնկալվող վարկային կորուստները գնահատվում են պահուստի մատրիցայի կիրառմամբ՝ հիմք ընդունելով Հիմնադրամի վարկային կորստի պատմական փորձը, որը ճշգրտված է պարտապանների նկատմամբ կիրառվող հատուկ գործոնների մասով, ինչպես նաև ընդհանուր տնտեսական դրության և հաշվետու ժամանակաշրջանի պայմանների և ընթացիկ և կանխատեսվող ուղղությունների գնահատումը, այդ թվում նաև ժամանակի մեջ դրամի արժեքը, անհրաժեշտության դեպքում:

Բոլոր այլ ֆինանսական գործիքներ համար Հիմնադրամը ճանաչում է ամբողջական ԱՎԿ, երբ սկզբնական ճանաչումից ի վեր նկատվել է վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր, Հիմնադրամը չափում է ֆինանսական գործիքի մասով կորստի գծով պահուստը 12-ամսյա ԱՎԿ-ի չափով: Վարկի գործողության ողջ ընթացքից ակնկալվող ԱՎԿ-ները վարկային կորուստներ են, որոնք հանգեցնում են բոլոր հնարավոր դեֆոլտային իրադարձություններին՝ ֆինանսական գործիքի գործողության ժամկետի ընթացքում: Ի հակադրություն, 12-ամսյա ԱՎԿ-ն ներկայացնում է գումար, որը հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում կարող է հանգեցնել ֆինանսական գործիքի հավանական դեֆոլտային իրադարձությունների:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Այլ ֆինանսական պարտավորություններ. Այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային ծախսը համապատասխան ժամանակաշրջանում տեղաբաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն ավելի մանրամասն ներկայացված է վերոնշյալ «զուտ տոկոսային եկամուտ» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամի պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Հիմնադրամը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները՝ հրապարակված, սակայն դեռևս չգործող:

Սույն նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը միայն ցուցադրական նպատակ ունի: Կազմակերպությունները պետք է վերլուծեն դրանց ազդեցությունը իրենց ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմնվելով որոշակի փաստերի և հանգամանքների վրա և կատարեն համապատասխան բացահայտումները:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդատներում	*Էականության սահմանումը*
Փոփոխություններ ՖՀՀՄՍ 16 ստանդարտում	*COVID-19-ի մասով վարձակալության վճարի կոնցեսիայի ստանդարտի նախնական կիրառումը*
Հայեցակարգային հիմունքներ	*ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների փոփոխությունները*

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդարտներում *Էականության սահմանումը*. Այս փոփոխությունների նպատակն է տալ «էականություն» տերմինի ավելի հասկանալի սահմանում ՀՀՄՍ 1 ստանդարտում և մտադրություն չունեն փոխել էականության հասկացությունը ՖՀՄՍ ստանդարտներում: «Անորոշ» էական տեղեկատվություն և ոչ էական տեղեկատվություն հասկացությունները ընդգրկվել են նոր սահմանման մեջ:

Օգտագործողների որոշումների վրա ազդող Էականության շեմի հասկացությունը «կարող է ազդել» եզրույթից փոփոխվել է՝ դառնալով «հավանականորեն հնարավոր է ազդեցություն ունենալ»:

ՀՀՄՍ 8-ում էականության սահմանումը փոխարինվել է ՀՀՄՍ 1-ում էականության սահմանման հղումով: Ի լրում, ՀՀՄՍԽ-ն փոփոխել է այլ Ստանդարտներն ու Հայեցակարգային հիմունքները, որոնք ներառում են էականության սահմանումը կամ հղում են կատարում «էական» տերմինին ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու նպատակով:

Այս փոփոխությունները կիրառվում են հեռանկարային հիմունքներով 2020 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, որոնց վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Հիմնադրամի ղեկավարությունը չի ակնկալում, որ վերոնշյալ

ստանդարտների ընդունումը զգալի ազդեցություն կունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտում՝ COVID-19-ի մասով վարձակալության վճարի կոնցեսիայի ստանդարտի նախնական կիրառումը

2020թ.մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց COVID-19-ի մասով վարձակալության վճարի կոնցեսիաները (փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտին), որոնք վարձակալներին տրամադրում են գործնական կոնցեսիաներ, որոնք առաջանում են որպես COVID-19-ի ուղղակի հետևանք, ՖՀՄՍ 16-ի գործնական մոտեցման ներդրման միջոցով: Գործնական նպատակահարմարությունը թույլ է տալիս վարձակալին որոշում ընդունել չգնահատել, թե արդյոք COVID-19-ի վարձակալության կոնցեսիան համարվում է վարձակալության վճարի փոփոխություն: Վարձակալը, որը ընդունում է այդ որոշումը, պետք է հաշվի առնի COVID-19-ի վարձակալության արտոնության արդյունքում վարձակալական վճարների ցանկացած փոփոխություն՝ կիրառելով ՖՀՄՍ 16-ը, եթե այդ փոփոխությունը չի եղել վարձակալության փոփոխություն:

Գործնական նպատակահարմարությունը կիրառվում է միայն COVID-19-ի ուղղակի հետևանք հանդիսացող վարձակալական վճարի արտոնության նկատմամբ և միայն հետևյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում.

- Վարձակալական վճարների փոփոխությունը հանգեցնում է վարձակալության վարձատրության վերանայմանը, որն ըստ էության համընկնում է փոփոխությանը անմիջապես նախորդող վարձակալության վարձատրության հետ կամ պակաս է;
- Վարձակալական վճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ. հունիսի 30-ին կամ մինչև այդ թվականը վճարման ենթակա վճարների վրա (վարձակալության կոնցեսիան համապատասխանում է այդ պայմանին, եթե այն հանգեցնում է 2021թ. հունիսի 30-ին վարձակալական վճարների նվազեցմանը կամ մինչև այդ թվականը և վարձակալական վճարների ավելացմանը, որոնք տարածվում են 2021թ. հունիսի 30-ից հետո); և
- Վարձակալության այլ պայմաններում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների փոփոխությունները. Վերանայված Հայեցակարգային Հիմունքներին զուգահեռ, որոնք գործում են 2018թ. մարտի 29-ին հրապարակումից ի վեր, ՀՀՄՍԽ-ն նաև թողարկեց փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների մասով : Փաստաթուղթը ներկայացնում է փոփոխություններ ՖՀՄՍ 2-ում, ՖՀՄՍ 3-ում, ՖՀՄՍ 6-ում, ՖՀՄՍ 14-ում, ՀՀՄՍ 1-ում, ՀՀՄՍ 8-ում, ՀՀՄՍ 34-ում, ՀՀՄՍ 37-ում, ՀՀՄՍ 38-ում, ՖՀՄՄԿ 12-ում, ՖՀՄՄԿ 19-ում, ՖՀՄՄԿ 20-ում, ՖՀՄՄԿ 22-ում և ՍԽՀ-32-ում:

Այնուամենայնիվ ոչ բոլոր փոփոխություններն են վերանայվում Հիմունքների հղումների և դրանց մեջբերումների հրապարակումներով, որպեսզի դրանք վերաբերվեն վերանայված Հայեցակարգային Հիմունքներին: Որոշ հրապարակումներ վերանայվում են միայն այն նպատակով, որպեսզի ցույց տան, թե Հիմունքների որ տարբերակին են հղում տալիս (ՀՍՄՀ Հիմունքներ՝ ընդունված ՀՀՄՍԽ-ի կողմից 2001 թ., 2010 թ. ՀՀՄՍԽ Հիմունքներ կամ 2018թ.նոր վերանայված Հիմունքներ) կամ որպեսզի ցույց տան, որ ստանդարտում սահմանումները չեն փոփոխվել վերանայված Հայեցակարգային Հիմունքների նոր սահմանումներով:

Վերանայված փոփոխությունները գործում են 2020թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

Հիմնադրամի ղեկավարությունը չի ակնկալում, որ վերոնշյալ ստանդարտների ընդունումը զգալի ազդեցություն կունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա ապագա ժամանակաշրջանների համար:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Հիմնադրամը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները՝ հրապարակված, սակայն դեռևս չգործող:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում (ՖՀՄՍ ստանդարտներում Տարեկան բարեփոխումների 2010-2012 ցիկլի ձևակերպման շրջանակներում)	*Պարտավորությունների դասակարգում որպես երկարաժամկետ կամ կարճաժամկետ*	*Գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարում	*Հաշվապահական գնահատումների սահմանումը*	*Գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում և ՖՀՄՍ Պրակտիկայի վերաբերյալ հայտարարություն 2	*Հաշվապահական գնահատումների բացահայտումը*	*Գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 ստանդարտներում	*Տոկոսադրույքի բարեփոխում-Փուլ 2*	*Գործում է 2021թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 16 ստանդարտում	*Հիմնական միջոցներ՝ Դասույթը նախքան նախատեսված օգտագործումը*	*Գործում է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՀՀՄՍ 37 ստանդարտում	*Պահուստներ, պայմանական պարտավորություններ և ակտիվներ-Խնդրահարույց պայմանագրեր-Պայմանագրի կատարման արժեքը*	*Գործում է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*

Փոփոխություններ ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում	*Ակտիվների վաճառք կամ նվիրատվություն Ներդրողի և Ասոսիացված ընկերության կամ Համատեղ ձեռնարկության միջև*	*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ սահմանված չէ, այնուամենայնիվ, վաղ կիրառումը թույլատրվում է:*
Փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտում	*COVID-19-ի մասով վարձակալության վճարի կոնցեսիաներ*	*Գործում է 2020թ. հունիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*
Փոփոխություններ ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41 ստանդարտներում և ՖՀՄՍ 16 ստանդարտի բոլոր ցուցադրական օրինակներում	*Տարեկան բարեփոխումներ 2018-2020 ցիկլի ՖՀՄՍ ստանդարտներում*	*Գործում է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:*

Հիմնադրամի ղեկավարությունը չի ակնկալում, որ վերոնշյալ ստանդարտների ընդունումը զգալի ազդեցություն կունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա ապագա ժամանակաշրջանների համար:

4. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հիմնադրամի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ Հիմնադրամի ղեկավարությանն անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է փոփոխության և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Նվիրատվությունների հասանելիությունը. Հիմնադրամի կողմից կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերի ֆինանսավորումը մեծապես պայմանավորված է տվյալ տարում նվիրատվություններից ստացված եկամտից: Ղեկավարության կարծիքով, Հիմնադրամը մինչ այսօր հնարավորություն է ունեցել համալրել բավարար միջոցներ և չի ակնկալում այդ նվիրատվությունների էական նվազում կամ կրճատում տեսանելի ապագայում: Ղեկավարության կողմից չեն հայտնաբերվել էական անորոշություններ՝ կապված այնպիսի դեպքերի կամ պայմանների հետ, որոնք էական կասկած կհարուցեին Հիմնադրամի գործունեության շարունակականության ապահովման վերաբերյալ:

5. ԵԿԱՄՈՒՏ

	2020 թ.	2019 թ.

Եկամուտ ֆոնդերի օգտագործումից	1,024,069	881,371
	1,024,069	**881,371**

Հիմնադրամը ստանում է նվիրատվություններ, դրամաշնորհներ և այլ տեսակի աջակցություն գործընկեր կազմակերպություններից և անհատներից: Նվիրատվությունների օգտագործումը սահմանափակվում է դոնորների կողմից: Սահմանափակումները վերաբերում են ֆոնդերի տնօրինմանը Հիմնադրամի Կանոնադրությամբ սահմանված գործողությունների մասով կամ սահմափակվում են դոնորների կողմից հաստատված հատուկ նպատակների համար: Ֆոնդերը համարվում են սահմանափակված ստացման պահին և ճանաչվում են որպես եկամուտ, երբ սահմանափակումները իրացվում են Հիմնադրամի գործողությունների արդյունքում: Տե՛ս ծանոթագրություն 12:

6. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

	2020թ.	2019թ.
Աշխատավարձի գծով ծախսեր ծրագրի իրականացման համար	470,247	326,653
Ֆինանսական աջակցություն մասնակիցներին	204,541	180,370
Նվիրատվություն Արցախի դպրոցներին	85,588	-
Նվիրատվություն Հայաստանի դպրոցներին	31,532	-
Համայնքային ծրագրեր	30,156	6,452
Մասնակիցների համար կրթական և մասնագիտական վերապատրաստման ծախսեր	12,050	49,999
ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագիր	3,692	3,806
Այլ	7,653	-
Աջակցություն ԹՖԱ ՀԿ-ի գործունեությանը	-	6,000
	845,459	**573,280**

Նախորդ ժամանակաշրջաններում գործընկեր կազմակերպությունների կողմից նվիրատվությունները ստացվել են և ծրագրերն իրականացվել են ԹՖԱ ՀԿ-ի կողմից, որը նույնպես ստեղծվել է Հիմնադրի կողմից: Հիմնադրամը ստեղծվել է 2015 թ. դեկտեմբերի 30-ին, և ծրագրերի իրականացումն աստիճանաբար փոխանցվել է Հիմնադրամին, որի արդյունքում Հիմնադրամն է ստանում գործընկեր կազմակերպությունների կողմից նվիրատվությունները և իրականացնում ծախսերը անմիջականորեն:

7. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

	2020թ.	2019թ.
Աշխատավարձ և դրան առնչվող ծախսեր	46,408	64,451
Մաշվածություն	40,847	27,562
Մարքեթինգային ծախսեր	34,016	34,011
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	22,629	72,934
Մասնագիտական ծառայություններ	19,218	13,004
Գրասենյակային, կոմունալ և նմանատիպ ծախսեր	10,755	10,878
Այլ ծախսեր	9,346	7,235
Ապահովագրություն	4,538	2,734
Գրասենյակի վերանորոգման ծախսեր	2,599	21,938
Տրանսպորտային և վերահսկման ծախսեր	699	8,673
Կարճաժամկետ վարձակալություն	-	18,017
	191,055	**281,437**

8. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	Փոխադրա-միջոցներ	Համակար-գիչներ և գրասենյա-կային սարքավո-րումներ	Տնտեսա-կան գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,886**	**19,257**	**9,655**	**63,798**
Ավելացումներ	-	25,044	15,286	**40,330**
Օտարումներ	-	-	(3,637)	**(3,637)**
Մնացորդը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,886**	**44,301**	**21,304**	**100,491**
Ավելացումներ	-	1,949	1,316	**3,265**
Մնացորդը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**34,886**	**46,250**	**22,620**	**103,756**
Կուտակված մաշվածություն				
Մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,281**	**7,543**	**1,742**	**14,566**
Մաշվածություն	6,976	8,251	5,204	**20,431**
Օտարումներ	-	-	(2,057)	**(2,057)**
Մնացորդը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**12,257**	**15,794**	**4,889**	**32,940**
Մաշվածություն	6,976	10,075	4,358	**21,409**
Մնացորդը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**19,233**	**25,869**	**9,247**	**54,349**
Զուտ հաշվեկշռային արժեք				
2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**29,605**	**11,714**	**7,913**	**49,232**
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,629**	**28,507**	**16,415**	**67,551**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**15,653**	**20,381**	**13,373**	**49,407**

9. ԱԿՏԻՎՆԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

	Շինություններ
Սկզբնական արժեք	
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	9,986
Ավելացումներ	44,915
Մնացորդը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**54,901**
Ավելացումներ	-
Մնացորդը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**54,901**
Կուտակված մաշվածություն	
Մնացորդը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Մաշվածության ծախս	7,131
Մնացորդը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,131**
Մաշվածության ծախս	19,438
Մնացորդը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**26,569**
Հաշվեկշռային արժեք	
2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**9,986**
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**47,770**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**28,332**

Վարձակալության պարտավորություններ

Մարման ժամկետների վերլուծություն	**2020թ.**	**2019թ.**
1-ին տարի	22,260	24,234
2-րդ տարի	13,936	20,545
3-րդ տարի	-	12,792
	36,196	**57,571**
Նվազեցում՝ չկուտակված տոկոսային եկամուտ	(3,232)	(9,018)
	32,964	**48,553**
Վերլուծված է որպես՝		
Ոչ ընթացիկ	13,376	29,771
Ընթացիկ	19,588	18,782
	32,964	**48,553**

Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունների համադրում՝

	2020թ. հունվարի 1	Վճարումներ	Տոկոսային ծախս	Արտարժույթի վերագնահատում	2020թ. դեկտեմբերի 31
Վարձակալության պարտավորություններ	48,553	(21,891)	5,355	947	32,964
	48,553	**(21,891)**	**5,355**	**947**	**32,964**

10. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	2020 թ.	**2019 թ.**
Կանխավճարներ ապրանքների և ծառայությունների գծով	11,389	4,777
Աշխատակազմի գծով հետաձգված ծախսեր	1,445	1,445
Այլ ակտիվներ և կանխավճարներ	743	970
	13,577	**7,192**

11. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Հաշիվներ տեղական բանկերում	548,232	445,173
Պակասեցում՝ ակնկալվող վարկային կորուստներ	(1,130)	(786)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց	**547,102**	**444,387**

Տեղական բանկերում պահվող հաշիվները ներառում են մեկ տեղական բանկում պահվող բանկային հաշիվների մնացորդներ (2019 թ.՝ մեկ տեղական բանկ):

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում դրամական միջոցները և դրանց համարժեքները ներկայացված են մինչև արժեզրկման կորուստների գծով պահուստները:

Ակնկալվող վարկային կորստի գծով համադրումը, համաձայն ՖՀՄՍ 9-ի, հետևյալն է՝

	Ընդամենը
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,832**
Վերականգնում տարվա համար	(2,046)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**786**
Արժեզրկման ծախս տարվա համար	344
Մնացորդը 2020թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,130**

12. ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	353,317	244,941
Հատուկ նպատակային միջոցների մուտքեր ժամանակաշրջանի ընթացքում	1,182,557	989,747
Հատուկ նպատակային միջոցների օգտագործումը տարվա ընթացքում՝		
Կատարված ծախսերի գծով	(1,020,804)	(841,041)
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով	(3,265)	(40,330)
Ընդամենը հատուկ նպատակային միջոցների օգտագործում	(1,024,069)	(881,371)
Մնացորդը տարվեվերջի դրությամբ	**511,805**	**353,317**

Հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում ստացված նվիրատվությունների մանրամասն նկարագրությունը ներկայացված է ստորև՝

		2020թ.	
	Արժույթ	Արժույթով	Հազար ՀՀ դրամով
Ստացված հատուկ նպատակային միջոցներ			
TEACH FOR ALL INC	ԱՄՆ դոլար	2,126,468	1,042,928
Հայաստանում Ճապոնիայի դեսպանատուն	ԱՄՆ դոլար	60,985	30,324
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն	ՀՀ դրամ	24,244,250	24,244
Teach For All INC	Եվրո	45,000	23,349
ՅՈՒՆԻՍԵՖ	ՀՀ դրամ	17,879,500	17,880
Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ	ՀՀ դրամ	9,440,560	9,441
DEUTSCHE POST AG	Եվրո	15,000	9,375
EaP CSF Secretariat	Եվրո	8,190	5,120
Փոթիկյան Կարլոս	ՀՀ դրամ	3,848,000	3,848
«Երեխաների աջակցության կենտրոն» ֆոնդ	Եվրո	5,339	3,401
Լոս Անջելես-Շուշի Բարեկամության Միություն	ԱՄՆ դոլար	6,800	3,300
«Երեխաների աջակցության կենտրոն» ֆոնդ	ՀՀ դրամ	2,734,125	2,734
INV/SPENDE/SPENDE	ԱՄՆ դոլար	5,290	2,537
ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ դրամ	1,500,000	1,500
Beinvest Oversize	ՀՀ դրամ	1,204,475	1,204
Թայմ լենդ	ՀՀ դրամ	490,000	490
Ա. Վ. Գումուշյան	ԱՄՆ դոլար	1,000	483
Աթենք	ՀՀ դրամ	289,800	289
Ղանդիլյան Արկադի	ՀՀ դրամ	100,000	100
Նաիրա Շաղամյան	ՀՀ դրամ	10,000	10
Ընդամենը ստացված հատուկ նպատակային միջոցներ			**1,182,557**

		2019թ.	
	Արժույթ	Արժույթով	Հազար ՀՀ դրամով
Ստացված հատուկ նպատակային միջոցներ			
TEACH FOR ALL INC	ԱՄՆ դոլար	1,864,500	895,550
Կարլոս Փոթիկյան	ՀՀ դրամ	19,188,000	19,188
ՅՈՒՆԻՍԵՖ	ՀՀ դրամ	17,638,920	17,639
TEACH FOR ALL INC	Եվրո	30,000	16,071
TEACH FOR ALL INC PAX	ԱՄՆ դոլար	17,436	8,335
Պիքսարտ	ՀՀ դրամ	7,000,000	7,000
ԹՖԱ Ընկերներ	ԱՄՆ դոլար	11,980	5,805
Իզմիրլյան հիմնադրամ	ՀՀ դրամ	4,778,100	4,778
Հայ Կրթական Հիմնարկություն	ՀՀ դրամ	4,750,000	4,750
Հայ Ավետարանչական Ընկերակցություն	ՀՀ դրամ	4,700,000	4,700
Անդրե Գումուշյան	ԱՄՆ դոլար	5,000	2,431
Դի-Էյչ-Էլ	ԱՄՆ դոլար	2,562	1,220
Թրաենգլ Փարթներս Ս.Ա	ԱՄՆ դոլար	2,500	1,218
Հայ օգնության ֆոնդ, Հայաստանի մ/ճ	ՀՀ դրամ	607,000	607
Էրնսթ ընդ Յանգ	ՀՀ դրամ	245,000	245
Թայմլենդ հիմնադրամ	ՀՀ դրամ	210,000	210
Ընդամենը ստացված հատուկ նպատակային միջոցներ			**989,747**

13. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Ֆինանսական պարտավորություններ		
Դրամական օգնության հաշվեգրում	14,980	17,508
Ապրանքների և ծառայությունների գծով կրեդիտորական պարտքեր	5,784	6,611
Այլ	4,129	177
	24,893	**24,296**
Ոչ ֆինանսական պարտավորություններ		
Պետական բյուջեի գծով կրեդիտորական պարտք	11,217	11,352
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	31,365	16,437
	67,475	**52,085**

14. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարումը հանդիսանում է Հիմնադրամի գործունեության հիմնարար գործոն և կարևոր տարր: Հիմնադրամի գործունեությունը ենթակա է ֆինանսական գործիքների օգտագործումից հետևյալ հիմնական ռիսկերի՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ռիսկերի գնահատման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող քանակական բացահայտումները:

Ռիսկի կառավարման հիմունքներ. Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի ստեղծման և վերահսկողության համար: Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականությունների մշակման և վերահսկման համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդին կատարած աշխատանքի վերաբերյալ:

Հիմնադրամի ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայություններ և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները: Հիմնադրամը կառավարում է իր ծախսումները և զուտ ակտիվները՝ իր գործունեության

շարունակականության կարողությունն ապահովելու և միևնույն ժամանակ՝ իրագործելով իր նպատակները ծախսերի օպտիմալացման միջոցով: Հիմնադրամի կողմից իր ռիսկերի չափման եղանակներում փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև չեն փոփոխվել ռիսկերի ենթարկվածությունը կամ դրանց կառավարման և չափման մեթոդները:

(ա) Պարտքային ռիսկ. Հիմնադրամը ենթակա է պարտքային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկ այն դեպքում, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Հիմնադրամին հիմնականում բնորոշ է պարտքային ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ բանկային հաշիվների մնացորդներում առկա դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին. ռիսկի առավելագույն չափն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը: Պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ հետևյալն է՝

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	548,232	445,173
Նվազեցում. Ակնկալվող վարկային կորուստներ	(1,130)	(786)
	547,102	**444,387**

Վերը նշված աղյուսակում ներկայացված բոլոր ակտիվները տեղակայված են տեղական բանկերից մեկում, որի վարկային ռեյտինգը Ba է ըստ Մուդիզի:

(բ) Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա իր ֆինանսական պարտավորությունների կատարման դժվարություններ՝ դրանց ժամկետը լրանալիս: Հիմնադրամը սահմանափակում է իրացվելիության ռիսկի ազդեցությունը, քանի որ գործառնություններն իրականացվում են ըստ բյուջեի: Հիմնադրամի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է՝ մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե՛ սովորական, թե՛ արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Հիմնադրամի համբավը վտանգի ենթարկելու:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների իրացվելիության վերլուծությունը 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են չզեղչված դրամական հոսքեր՝ ելնելով դրանց պայմանագրով սահմանված ժամկետների գծով պահանջի առաջադրման ամենավաղ ամսաթվից: Չի ակնկալվում, որ այս աղյուսակներում ներկայացված դրամական հոսքերը կարող են տեղի ունենալ էապես ավելի վաղ, կամ էապես տարբեր գումարներով:

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	Ընդամենը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Վարձակալության պարտավորություն	5,795	16,465	13,936	36,196
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	24,893	-	-	24,893
	30,688	16,465	13,936	61,089

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	Ընդամենը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Վարձակալության պարտավորություն	6,111	18,123	33,337	57,571
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	24,296	-	-	24,296
	30,407	18,123	33,337	81,867

(գ) Շուկայական ռիսկ. Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկը սահմանվում է որպես ֆինանսական գործիքի արժեքի տատանման ռիսկ՝ արտարժութային փոխարժեքների փոփոխությունների արդյունքում: Հիմնադրամի գործունեությունը ծավալվում է հիմնականում Հայաստանում և, որպես այդպիսին, Հիմնադրամի գործառնությունների զգալի մասը տեղի է ունենում տեղական արժույթով՝ ՀՀ դրամով:

Հիմնադրամի ֆինանսական վիճակը և դրամական հոսքերը ենթակա են արտարժույթի գործող փոխարժեքի տատանումների ազդեցության ռիսկին:

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժութային ռիսկին 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	29,131	461,214	56,757	547,102
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	29,131	461,214	56,757	547,102
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Վարձակալության պարտավորություններ	1,286	31,678	-	32,964
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	24,893	-	-	24,893
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	26,179	31,678	-	57,857
Բաց դիրք	2,952	429,536	56,757	489,245

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժութային ռիսկին 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,949	412,358	16,080	444,387
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	15,949	412,358	16,080	444,387
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Վարձակալության պարտավորություններ	48,553	-	-	48,553
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	24,296	-	-	24,296
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	72,849	-	-	72,849
Բաց դիրք	(56,900)	412,358	16,080	371,538

Արտարժութային ռիսկի զգայունություն. ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Հիմնադրամի զգայունությունը ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլարի փոխարժեքի 20% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 20%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժութային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով գնանշված դրամային հոդվածները և ճշգրտում է դրանց փոխարկումը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 20% տարբերության տեսանկյունից: Ստորև նշված դրական թիվը ներկայացնում է նախքան շահութահարկով հարկումը շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների աճ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 20% արժզրկման դեպքում: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 20% արժևորման համապատասխան ազդեցություն կունենար շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների վրա, և մնացորդը կլիներ բացասական:

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Շահույթ և վնաս/ Զուտ ակտիվներ	Շահույթ և վնաս/ Զուտ ակտիվներ
ՀՀ դրամի 20% արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ	85,907	82,470
ՀՀ դրամի 20% արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ	(85,907)	(82,470)

Վերևում բերված աղյուսակում ներկայացված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամ արտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Տոկոսադրույքի ռիսկ. Հիմնադրամը չի ենթարկվում տոկոսադրույքի ռիսկի, քանի որ չունի տոկոսակիր ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ հաշվետու կամ նախորդ ժամանակաշրջանների վերջի դրությամբ: Հետևաբար, ղեկավարությունը չի իրականացնում տոկոսադրույքի զգայնության պաշտոնական վերլուծություն տոկոսադրույքի շուկայի փոփոխությունների համար:

15. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՖՀՄՍ-ն սահմանում է իրական արժեքը որպես գին, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի ընթացքում: Այստեղ ներկայացված գնահատումները կարող են բնութագրական չլինել Հիմնադրամի կողմից որոշակի գործիքի ամբողջական տնօրինումը շուկայում փոխարկման արդյունքում իրացնելիս Հիմնադրամի կողմից ստացվելիք գումարների առումով:

Այնուամենայնիվ, գնահատված իրական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է կիրառել դատողություն: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կրել զարգացող շուկայի որոշ բնութագրեր և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկայում գործառնությունների ծավալները: Շուկայական գնանշումները կարող են արդիական չլինել կամ արտացոլել արտասովոր իրացման գործարքներ, հետևաբար՝ չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունը օգտագործել է շուկայում առկա ողջ հասանելի տեղեկատվությունը՝ ֆինանսական ակտիվների իրական արժեքները գնահատելու համար:

Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն. Հաշվի առնելով ֆինանսական գործիքների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը, ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրենց իրական արժեքին:

16. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվի առնելով Հիմնադրամի գործառնությունների բնույթը, Հիմնադրամը չունի կապիտալի կառավարման քաղաքականություն: Հիմնադրամի նկատմամբ կիրառելի չեն կապիտալի կառավարման արտաքին պահանջներ: Հիմնադրամի կողմից կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերի ֆինանսավորումը մեծապես պայմանավորված է տվյալ տարում նվիրատվություններից ստացված եկամտից: Ղեկավարության կարծիքով, Հիմնադրամը մինչ այսօր հնարավորություն է ունեցել համալրել բավարար միջոցներ և չի ակնկալում այդ նվիրատվությունների էական նվազում կամ կրճատում տեսանելի ապագայում:

17. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական գործընթացներ. Հիմնադրամը չի ունեցել այնպիսի իրավական խնդիրներ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

Դատական վարույթներ. Հիմնադրամը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներգրավված չի եղել նշանակալի դատական վարույթներում (2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ևս ներգրավված չի եղել որևէ դատական վարույթում): Ֆինանսական հաշվետվություններում այդ գծով պահուստ չի ստեղծվել:

Հարկեր. Հայաստանի Հանրապետության առևտրային համակարգը կարգավորող օրենսդրությունը, ներառյալ հարկային օրենսդրությունը, կարող է ունենալ մեկից ավելի մեկնաբանություններ: Ավելին, վտանգ կա, որ հարկային մարմինները կամայական դատողություններ կարող են կիրառել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Եթե Հիմնադրամի գործունեության վերաբերյալ ղեկավարության որոշակի որոշումներ հարկային մարմինների կողմից վիճարկվեն, Հիմնադրամը կարող է ենթարկվել հավելյալ հարկերի, տույժերի և տոկոսների:

Գործառնական միջավայր

Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթակա զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրներինը, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Հայաստանում բիզնեսին վերաբերող օրենքներն ու կանոնակարգերը շարունակում են արագորեն փոխել հարկային և կարգավորիչ դաշտը և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հայաստանի ապագա տնտեսական ուղղության վրա մեծապես ազդում է կառավարության կողմից ընդունված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը՝ իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայրերի զարգացումների հետ միասին: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին:

Հայաստանը շարունակում է կրել քաղաքական և տնտեսական փոփոխություններ: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանը չունի զարգացած գործարար և կարգավորող ենթակառուցվածք, որը սովորաբար գոյություն ունի ավելի հասուն ազատ շուկայական տնտեսությունում: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալը, ինչը կարող է չանդրադառնալ ֆինանսական գործիքների արժեքի վրա: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է, ինչպես նաև կենտրոնացված տնտեսական բազան, տարածաշրջանային անկայունությունը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում առկա ռիսկերը, այդ թվում՝ վարկային շուկաների վիճակի վատթարացումը կարող են դանդաղեցնել կամ խաթարել Հայաստանի տնտեսության զարգացումը, ինչպես նաև բացասաբար անդրադառնալ Հիմնադրամի կապիտալի և դրա հասանելիության, ավելի ընդհանրականորեն՝ գործունեության արդյունքների, ֆինանսական դրության և հեռանկարների վրա: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Հիմնադրամի գործունեությունը կարող են վատթարանալ:

COVID-19

Բացի այդ, 2020թ. սկզբին նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների կողմից ձեռնարկված պատասխան միջոցները հանգեցնում են մի շարք ընկերությունների համար զգալի գործառնական գործունեությունների խափանումների և էական ազդեցություն են ունենում համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Քանի որ իրավիճակն արագ զարգանում է, այն կարող է զգալի ազդեցություն ունենալ մի շարք ոլորտների շատ ընկերությունների, ձեռնարկությունների վրա՝ ներառյալ, բայց չսահմանափակելով ձեռնարկությունների գործունեությունների խափանմանը՝ որպես արտադրության խափանման կամ ձեռնարկությունների փակման, մատակարարման շղթայի ընդհատման, անձնակազմի կարանտինի մեջ գտնվելու, նվազած պահանջարկի և ֆինանսավորման գծով առաջացած դժվարությունների արդյունք: Ավելին, Հիմնադրամը կարող է կրել նոր կորոնավիրուսային հիվանդության անհամեմատ զգալի ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերջինիս ունեցած բացասական ազդեցության հետևանքով:

COVID-19-ի ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա մեծապես կախված է համաշխարհային և հայկական տնտեսության վրա համաճարակային ազդեցության տևողությունից և տարածվածությունից: 2020թ. կեսից վերջն ընկած հատվածում կառավարությունը թուլացրել է տնտեսական որոշ և գործարար միջավայրի սահմանափակումներ՝ հաշվի առնելով պանդեմիայի վիճակը, սակայն դրանց մասշտաբները կարող են փոխվել՝ ի պատասխան պանդեմիայի անորոշ ապագա զարգացմանը:

Քաղաքական անկայունությունը և **ռազմական գործողությունները տարածաշրջանում**

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը սրվեց հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը վերականգնվեց 2020թ. նոյեմբերի 10-ին կողմերի միջև ստորագրված պայմանագրով: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրում: Պայմանագրի արդյունքների դեմ մի շարք բողոքներ հանգեցրել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որոնք տեղի կունենան 2021թ. հունիսին:

Իրավիճակի հետագա զարգացումը կարող է էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

Պայմանագրային պարտավորություններ. Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը տևում է երկու տարի (22 ամիս), որի յուրաքանչյուր փուլը սկսվում է սեպտեմբերի ամսին և ավարտվում հաջորդ տարվա հունիս ամսին: Հիմնադրամը ֆինանսական աջակցության պայմանագրեր է կնքում ծրագրի այն մասնակիցների հետ, ովքեր բարեհաջող անցնում են Ամառային Ինստիտուտի վերպատրաստման դասընթացը և միանում են Հիմնադրամին որպես հավանական մասնակիցներ: 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հինգերորդ և վեցերորդ սերունդների կրթական ծրագիրը ընթացքի մեջ է և այն կավարտվի 2021 և 2022 թթ. հունիս ամսին համապատասխանաբար: Մասնակիցների հետ կնքված ֆինանսական աջակցության պայմանագրերի մասով Հիմնադրամն ունի պայմանագրային պարտավորություններ, որոնք ներկայացվում են ստորև աղյուսակում՝

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Մինչև 1 տարի	165,914	164,205
1-2 տարի	56,053	56,411
Ընդամենը ֆինանսական աջակցության պայմանագրային պարտավորություններ	**221,967**	**220,616**

Ինչպես նաև, Հիմնադրամն ունի պարտավորություններ գործընկեր-համալսարանների նկատմամբ՝ մասնակիցների մագիստրատուրայի երկամյա ծրագրի համար վճարվելիք կրթաթոշակների մասով:

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Մինչև 1 տարի	10,820	10,735
1-2 տարի	3,370	4,080
Ընդամենը կրթաթոշակների մասով պարտավորություններ	**14,190**	**14,815**

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառույթները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Հիմնադրամի հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգիչ հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Հիմնադրամը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիտորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

18. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

(ա) Հոգաբարձուների խորհուրդ

Հիմնադրամի կառավարումը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Հոգաբարձուների խոչհուրդը բաղկացած է 5 հոգաբարձուներից՝ Սեմ Սիմոնյանի նախագահությամբ: Հոգաբարձուների նախագահը կամ հոգաբարձուները Հիմնադրամից վարձատրություն չեն ստանում:

Փոխկապակցված կողմերն են՝ Teach For All, Inc. ընկերությունը, որպես գործընկեր կազմակերպություն, Հոգաբարձուների խորհրդի անդամները, ինչպես նաև ղեկավարության ներկայացուցիչները:

	2020թ.		2019թ.	
	Փոխկապակցված կողմերի գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների	Փոխկապակցված կողմերի գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների
Ստացված նվիրատվություններ				
Teach For All	1,066,277	**1,182,557**	911,621	**989,747**
Teach For All INC PAX	-	**1,182,557**	8,335	**989,747**
ԹՖԱ Ընկերներ	-	**1,182,557**	5,805	**989,747**
Հոգաբարձուներ և Հոգաբարձուների փոխկապակցված կողմեր			-	**989,747**
Ծրագրային ծախսեր				
Աջակցություն ԹՖԱ ՀԿ-ի գործունեությանը	-	**845,459**	6,000	**573,280**
Վարչական եվ այլ ծախսեր				
Գործուղման ծախսերի փոխհատուցում	77	**191,055**	8,335	**281,437**
Վարձավճարի ծախսեր			16,320	**281,437**

(բ) Ղեկավար անձնակազմի վարձատրությունը

	2020թ.		2019թ.	
	Փոխկապակցված կողմերի գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների	Փոխկապակցված կողմերի գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների
Առանցքային ղեկավար անձնակազմ				
Ընդամենը հատնապարփակ նկատուտ				
Աշխատակիցներին կարճաժամկետ հատուցում՝ ներառված վարչական և այլ ծախսերում	-	-	28,407	**281,437**
Աշխատակիցներին կարճաժամկետ հատուցում՝ ներառված ծրագրային ծախսերում	**156,806**	**845,459**	86,479	**573,280**
Ֆինանսական միճակի մասին հաշվետվություն				
Կանխավճարային ծախսեր	1,445	**13,577**	1,445	**7,192**

19. ՀԵՏԱԳԱ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնադրամը պայմանագիր է ստորագրել Friends of Teach For Armenia Incorporated ընկերության հետ 2021 թ. փետրվարի 9-ին: Համաձայն պայմանագրի պայմանների՝ դոնորը պարտավորվում է փոխանցել 144 000 ԱՄՆ դոլար: «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամը պարտավորվում է նվիրատվությունները օգտագործել Teach For Hope արշավի իրականացման համար: Teach For All, Inc. հետ ստորագրվել են այլ ենթադրամաշնորհային ծրագրեր 2021թ. մարտի 2-ին և 2021թ. փետրվարի 18-ին:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 10.11.2021 00:49